1199
551
---
1950

(Կրկնութիւն)

# ՔՐԻՍՏՈ՛ՆԷ
# ԱԿԱ՛Ն։

Հաւաքեցեալ յու-
մեմնէ բանասիրէ հա-
մառօտաբար վասն
մանկանց անվարժից
կամ թերավարժից։

Ի Թուականիս Հայոց
ռ ճ ղ թ ։

Յունվարի ԻԷ։

Տ Յ

* Ա͞ստուածաբանութիւն։

ըսկսանել այս տետրա կես·
Նախ պ͞րտիս դու որ ուսանես
հարկաւորըն քրիստոնէ- ից·
Թէ զինչ է կամ և թէ քա նիս։
Երեք մասունք են համա տոյ·
Լրում Ա͞ծային գը րոյ·
Լաճապէս միշտ ուսանե լով
ուրիշ ուրիշ ճանաչե լով։
Առաջին մասն է՛ այս յայտ նի·
ուղղափառացըս պաշտե լի·
երեք անձն և մի բընու թիւն·
ա͞ծութեամբըն միա- կի։
Երկրորդըն մարդեղու թեան·
առնուլ մարմին մեր բընու թեան·
զոր անճառապէս միա- ցոյց·
բանըն Ա͞Ծ իւր էու- թեան։



Սաև

Նաեւ երրորդն եկեղե ցւոյն.
սրբազնակատար խորհըր դոյն.
եօթըն կարգաւ ճանաչե լոյ.
սրբազանից իմանա լոյն:
Այս երից որ տեղեկա ցար.
մեք գրոց լուսաւորե ցար.
ճշմարիտ հաւատացե լոց.
իսկապէս շարայարե ցար:
Թէպէտ 'ի հնոցն էր արա րեալ.
բայց երկարապէս շարա դրեալ.
զայս կարճառօտ հաւաքե ցաք.
դիւրաւ լիցի 'ի միտ ա ռեալ:





Մուն



Արժանի լինել դու քրիստո Նեսայ.
Զայս 'ի մըտի քում հաճա քեզ։

# Անուն Աստուծոյ։

Հարց։

Դու քրիստոնեա՞յ ես։

Պատասխանի։

Այո՛ քրիստոնեայ եմ։

Հարց։ Զի՞նչ է նշանն քրիստոնէից։

Պատ։ Սբ. և պատուական խաչն քրիստի։

Հարց։ Խաչակնքեա՛ զի տեսանեմ թէ որպէս խաչակնքես։

Պատ։ Յանուն Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

**Հարց:** Ո՞վ ստեղծ զքեզ:

**Պատ:** Ած ամենակարողն:

**Հարց:** Ինչո՞ւ համար ստեղծ:

**Պատ:** Վս այն՝ զի զինքն ճանաչիցեմ. և զկամքն կատարիցեմ. և վերջապէս արքայութեն արժանաւորիցիմ:

**Հարց:** Զի՞նչ է Ած:

**Պատ:** Է՛ ստեղծօղ երկնի և երկրի երևելեաց և աներևութից:

**Հարց:** Ած քանի՞ է:

**Պատ:** Մի է:

**Հարց:** Ածային անձինք քանի՞ք են:

**Պատ:** Երեք են:

**Հարց:** Երեք անձանց անուանքն զի՞նչ են:

**Պատ:** Միոյն անունն՝ Հայր է. երկրորդին՝ Որդի է. և երրորդին՝ Հոգի Սբ:

**Հարց:** Ուրեմն Հայր Ա՞ծ է:

**Պատ:** Նյն Ած է:

**Հարց:** Որդին Ա՞ծ է:

Պատ. Այո՛ ԱԾ է։
Հարց. Հոգին ալ ԱԾ՞ է։
Պատ. Այո՛ ԱԾ է։
Հարց. Ապա ուրեմն երեք ածք են
Պատ. Ոչ երեք ածք են, այլ մի ած և երեք անձինք։

## Մասն Երկրորդ։

### Հարց.

Այս երից անձանց մի՞ անձն մարդացաւ։

Պատ. Այո՛ մարդացաւ։
Հարց. Ո՞ր անձն մարդացաւ։
Պատ. Որդւոյ անձն մարդացաւ։
Հարց. Հայր ևս մարդացա՞ւ։
Պատ. Ոչ։
Հարց. Հոգին ալ ևս մարդացա՞ւ։
Պատ. Ո՛չ։
Հարց. Ապա ո՞ր անձն մարդացաւ։
Պատ. Մի միայն որդւոյ անձն մարդացաւ։


Հարց

Հարց։ Մարդացեալ ասելն զի՞նչ ասել է։

Պատ։ Մեզ նման կատարեալ մարդ եղեալ ասել է. մարմին առնել լոյս 'ի մաքուր յարենէն կուսին Մարիամու։

Հարց։ Մարմին առնօղն ո՞վ է։

Պատ։ Բանն Այ, որ է միածին որդին։

Հարց։ Զի՞նչ է առեալն։

Պատ։ Հոգի. միտք. և մարմին. որք են մարդկայինք։

Հարց։ Զիա՞րդ առօղն և առեալն լինին մի անձն և մի բնութիւն։

Պատ։ «Քանզի բանն Այ այնպէս միաւորեաց իւր անձին և բնութեն խառնում զմարդկութիւն որպէս մարմին մեր միաւորեալ է ընդ հոգւոյ մերում, և մի բնութիւն եղեալ է ընդ նմա առանց շփոթման։ Այնպէս և մարդկութիւն միաւորեցաւ



ընդ

ընդ անձին և ընդ բնութ-
եանն Այ՟, և մի Ածա-
մարդկային բնութն՟ եղև
ընդ նմա, առանց շփոթ-
ման և առանց փոփոխման:

Հարց: Յս՟ ասելն զի՞նչ ասել է:

Պատ: Փրկիչ ասել է. զի փրկեաց
զմեզ ՚ի մեղաց սատանայի.
և ՚ի տանջանաց դժոխոց:

Հարց: Քս՟ ասելն զի՞նչ ասել է:

Պատ: Օծեալ ասել է. վասն զի
բանն Այ՟ մարդացեալ օծե-
ցաւ ՚ի հօրէն Այ՟ Հոգւովն
սրբով. որպ՟ Պետրոս Առա-
քեալն ուսուցանէ. Գործ. Ժ:

Հարց: Տէրն մեր Յս՟ Քս՟ յորու՞մ
աւուր ծնաւ:

Պատ: ՚Ի վեցում աւուրն յունվա-
րի ամսոյն:

Հարց: Յումմէ՞ ծնաւ:

Պատ: ՚Ի կուսէն Մարիամէ. որ
՚ի վերն ասացաւ:

Հարց։ Մարիամ ա̃ծածինն կոյս մնա՞ց յետ ծնանելոյն։

Պատ։ Այո՛, վս̃ զի անսերմն յղացաւ, և անապականաբար ծնաւ. վս̃ որոյ յետ ծընանելոյն կոյս մնաց։

Հարց։ Քրս̃ ը̃ ա̃ծութէն ծնեա՞լ էր ՚ի հօրէ։

Պատ։ Այո՛ ծնեալ էր։

Հարց։ Ըստ մարդկութէն ծնա՞ւ ՚ի մօրէ։

Պատ։ Այո՛ ծնաւ։

Հարց։ Առաջին ծնունդն ո՞րպ̃ էր։

Պատ։ Անժամանակ և անմարմին ծնունդ առանց մօր։

Հարց։ Երկրորդ ծնունդն ո՞րպ̃ է։

Պատ։ Ժամանակեայ. և մարմնով ծնունդ առանց հօր։

Հարց։ Քրս̃ քանի՞ տարի շրջագայեցաւ ՚ի վր̃ երկրի։

Պատ։ Երեսուն և երեք տարի ու կէս։

**Հարց։** Այնքան ժամանակ զի՞նչ արար։

**Պատ։** Ուսոյց հետևողաց իւրոց զճանապարհն ճշմարտութեան։

**Հարց։** Յետ այնքան ժամանակին կատարմանն զի՞նչ արար։

**Պատ։** Եկն կամաւ ՚ի չարչարանս, խաչեցաւ, և մեռաւ վասն մեր, ըստ առաքելոյն, թէ Քրիստոս մեռաւ վասն մեղաց մերոց, և այլն։

**Հարց։** Ընդէ՞ր մեռաւ։

**Պատ։** Վասն փրկութեան մերոյ։

**Հարց։** Յորո՞յ վերայ մեռաւ։

**Պատ։** ՚Ի վերայ խաչափայտին։

**Հարց։** Եթէ Քրիստոս Աստուած էր զիա՞րդ մեռաւ։

**Պատ։** Ո՛չ ասեմ թէ Աստուածային բնութեամբն մեռաւ, այլ առեալ մարմնովն այսինքն անճառելի մարմնաւորութեամբն. վասն որոյ և ասի Աստուած խաչեցաւ և մեռաւ։

Ժ՟րդ։ Զկնի մահուանն զի՞նչ ա֊րարին զմարմինն ք͞ի։

Պ՟պ։ Առին ՚ի խաչէն. եւ եդին ՚ի նորափոր գերեզմանի ան֊բաժանելի ա͞ծութ͞ենն։

Ժ՟րդ։ Քանի՞ օր մնաց ՚ի գե֊րեզմանի։

Պ՟պ։ Երեք օր։

Ժ՟րդ։ Որո՞վ էջ ՚ի դժոխս։

Պ՟պ։ Բանական հոգւովն։

Ժ՟րդ։ Ցորժամ էջ ՚ի դժոխս զի՞նչ արար։

Պ՟պ։ Աւերեաց զդժոխս, եւ ազա֊տեաց զհոգիսն որք էին ՚ի բանտին։

## ❋ Մ՟ան Երկ՟րդ։ ❋

Ժ՟րդ։ Ս Է եկեղեցի ասելն ի՞նչ ասել է

Պ՟պ։ Եկեղեցին է ժողովումն ա͞մ հաւատացելոց քրիստո֊նէից. որք մկրտեալք են յանուն հօր եւ որդւոյ եւ հոգւոյն ս͞բյ։

Հարց. Զի՞նչ է խորհուրդ եկե_ղեցւոյ։

Պատ. Է՛ ազատութիւն հոգւոր։

Հարց. Քանի՞ք են։

Պատ. Եօթն են։

Հարց. Զի՞նչ են։

Պատ. Մկրտութիւն. Դրոշմ. Հա_ղորդութիւն. Ապաշխարութիւն. Պսակ. Ձեռնադրութիւն. և Վերջին օծումն ք՟հնյից։

Հարց. Մկրտութիւն զի՞նչ է։

Պատ. Է՛ լուացումն արտաքին մարմնոյ. և մաքրումն ներ_քին հոգւոյ. և ազատութիւն յըսկզբնական մեղաց։

Հարց. Դրոշմն զի՞նչ է։

Պատ. Է՛ հաստատութիւն խորհուրդ 'ի հաւատս ք՟սի, և կնիք ճանաչման. որ տուեալ լի_նի առ 'ի զօրացուցանել. և քաջացնել մարդն. և լինել զինուոր ք՟սի։

 Հարց

Հարց։ Հաղորդութիւն զի՞նչ է։
Պատ։ Է՛ մարմին և արիւն տն մե-րոյ յսի քսի · և կերակուր հոգևոր, որ և վերջապէս տայ մեզ ժառանգել զկեանս յաւիտենականս։

Հարց։ Ապաշխարութիւն զի՞նչ է։
Պատ։ Է՛ զանցեալ չարիսն լալ, և ըզլալի իրս մի՛ ևս գործել․ կամ դարձումն ՚ի մեղաց, և գտանել վերստին զկորու-սեալ շնորհսն։

Հարց։ Քահանայութիւն զի՞նչ է։
Պատ։ Է՛ հոգևոր իշխանութիւն ինչ, որով կարող է մատուցանել ըզ պատարագ · նաև զայլ խորհուրդս կատարել։

Հարց։ Պսակն զի՞նչ է։
Պատ։ Է՛ խորհուրդ եկեղեցւոյ, որ ՚ի բաց բառնայ զշնութիւն եզպոռնկութիւն · եանլուծա-նելի կապանօք կապէ զայրն

 և

եւ զկէննն ՟Ը երեսաց վ՟ս փրր
կուէ իւրեանց· ծնանել և
սնուցանել զորդիս ՚ի պաշ
տաման ա՟յ։

Հարց. Վերջին օծումն քահանայ
ից զի՞նչ է։

Պատ. Է՛ պատիւ քահանայութե՟
կարգի։

Հարց. Ուստի՞ առէ՟լ է եկեղեցին
մեր զայս։

Պատ. ՚Ի Ս՟րբյն Դիոնեսիոսէ արիս
պագայուոյն, որ ՚ի մէջ գրր
քին յաղագս եկեղեցական
քահանայապետուէ ՚ի գլ՟
՟Է. ՚ի մասն ՟Բ. ասէ, թէ ա-
ռաքելական աւանդութի
էր զսրբազան ննջեցեալսն
օծանել։

Հարց. Առաքինութիւնս զի՞նչ է։

Պատ. Է՛ ունակութի մըտաց զոր
ընդունի հոգին, և լինի բա
րեգործ։

 Հարց.

Հարց: Քանի՞ք են:

Պատ: Եօթն են:

Հարց: Որպիսի՞ք են այսմ զոր լսեմ:

Պատ: Հաւատ. Յոյս. Սէր. Արի-ութիւն. Արդարութիւն. Խոհեմութիւն. և Ողջա-խոհութիւն:

Հարց: Հաւատն զի՞նչ է:

Պատ: Է՛ պարգև մի հեղեալ ՚ի մեզ յԱյ, զի նովաւ ճանա-չեմք զԱծ ամենազօր և ըստեղծիչ լեալ:

Հարց: Յոյսն զի՞նչ է:

Պատ: Յոյսն է՛ ըստոյգ ակնկա-լութիւն հանդերձեալ բա-րեացն, որ տալոց է Ած յա-ւուրն հատուցման:

Հարց: Սէրն զի՞նչ է:

Պատ: Է՛ ունակութիւն մտաց. որով սիրեմք զԱծ վն բարերա-րութեն և զընկերս մեր հա-ւասար մեզ վն Այ:

Հարց։ Արիութիւնն զի՞նչ է։

Պատ։ Է՛ ընդդէմ լինել փորձութեանց աշխարհի. և դժուարին կրիցն հանդուրժել։

Հարց։ Արդարութիւն զի՞նչ է

Պատ։ Է՛ հաւասարաբաշխութիւն ՚ի հոգի և ՚ի մարմին և ո՛չ խարայուցանել զինչսն այլոց յինքեան։

Հարց։ Խոհեմութիւնն զի՞նչ է։

Պատ։ Է՛ ընտրութիւն առնել ՚ի մէջ բարւոյ և չարի. չխաբել զոք, և չխաբիլ յումեքէ։

Հարց։ Ողջախոհութիւն զի՞նչ է։

Պատ։ Է՛ ՚ի բաց մերժել յինքեանց զամենայն մարմնական հեշտութեանս և ցանկութեանս որք պատահին։

Հարց։ Քանի՞ք են պարգեւք հոգւոյն սրբոյ։

Պատ։ Եօթն են։ ա, Իմաստութիւն.

Հանճար. Խորհուրդ. Զօ-
րութիւն. Գիտութիւն. Ած-
պաշտութիւն. և Երկիւղն այ։

Հարց։ Քանի՞ք են գործք ողոր
մութե՛ որ 'ի յիշատակ գան
յաւուրն դատաստանի։

Պատ։ Եօթն են. այսինքն,
Կերակրել զքաղցեալս.
Արբուցանել զծարաւեալս.
Զգեցուցանել զմերկս.
Ժողովել զօտարս.
Տեսանել զհիւանդս.
Այց առնել բանտարգելոց.
Թաղել զմեռեալս։
Այսոքիկ են մարմնաւոր
ողորմութիւնք։

Հարց։ Գո՞ն ևս հոգևոր ողորմու-
թիւնք։

Պատ։ Այո՛ կան այլ ևս եօթն հո-
գևոր ողորմութիւնք. Այն,
Խրատել զերկմիտսն.
Առաջնորդել տգիտաց.

Կշտամբել զմեղաւորս։
Մխիթարել զտրտմեալս․
Թողուլ զպարտս․
Յանձն առնուլ զվիշտս․
Աղաչել զԱ̅ծ̅ վասն կեն-
դանեաց և մեռելոց, և վ̅ս̅
մեղաց։

Հարց։ «Քանի՞ք են օրինացն բանք
կամ ’ի ձեռն որո՞յ ետ Ա̅ծ̅
զնոսա։

Պատ։ Տասն են բանք օրինացն
Ա̅յ̅․ և ’ի ձեռն Մովսեսի
ետ ’ի լեառն Սինայի։

Հարց։ Ասա մի ըստ միոջէ զի գի-
տացից։

Պատ։ Առաջինն՝ Ես եմ Տ̅ր̅ Ա̅ծ̅
քո․ և մի՛ եղիցի քեզ այլ
Ա̅ծ̅ բաց յինէն․ և մի՛ դիցես
զանուն Ա̅յ̅ քոյ ’ի վերայ
սնոտեաց։

Երկրորդն՝ Մի՛ արասցես
քեզ կուռս ըստ ամենայնի
Նմա

նմանութեան. յերկինս ՚ի
վեր, և յերկիր ՚ի խոնարհ։
Երրորդն՝ Յիշեա՛ զի սըր
բեսցես զօր շաբաթուն,
որ մեզ կիրակէ։
Չորրորդն՝ Պատուեա՛ ըզ
հայր քո և զմայր քո։
Հինգ երորդն՝ Մի՛ սպա_
նաներ։
Վեց երորդն՝ Մի՛ շնար։
Եօթն երորդն՝ Մի՛ գո_
ղանար։
Ութն երորդն՝ Մի՛ սուտ
վկայեր զընկերէ քումմէ։
Ինն երորդն՝ Մի՛ երդ_
նուր սուտ յանուն տ̅ն ա̅յ
քոյ։
Տասն երորդն՝ Մի՛ ցան_
կանար կնոջ ընկերի քոյ.
և մի՛ տան նորա. և մի՛
ընչից ն̅ր. և մի՛ ա̅մ իրաց
որք ն̅ր իցեն։



Հարց

Հարց: Քանի՞ք են ազգք մեղաց:

Պատ: Երկու. ա̃, Սկզբնական. և Ներգործական:

Հարց: Զի՞նչ է սկզբնականն. և զի՞նչ ներգործականն:

Պատ: Սկզբնականն՝ի հօրէն մեր_մէ ադամայ սերէ̃լ ունիմք ամ̃քն որ ջնջին մկրտութ̃բ: Իսկ ներգործականն յետ մկրտութ̃է կամօք մերովք որ գործեմք այն է:

Հարց: Ներգործականն քանի՞ս բաժանի:

Պատ: Երեք. այսինքն, Մահա_ցու. Ներելի. և Փոշետե_սակ:

Հարց: Մահացուն զի՞նչ է:

Պատ: Է՛ այն՝ զի յորում վ̃ր գտա_նիցի զնա մահացուցանէ:

Հարց: Ներելին, և Փոշետեսակն զի՞նչ է:

Պատ: Սոքա են, զի եթէ մարդ_

 ոք

ոք գործէ եւմոռանայ · կամ
թեթեւամիտ կրէ զապաշխա_
րանսն · կամ լիապէս չկա_
տարէ թողու ա՟ծ զերէ նե_
րելի եւխոշտետեսակ ասելն՝
խիստ թեթեւ մեղք ասել է ·
ոմ՟ անոճանքն պարզապէս
յայտնեն ։

Հարց ։ Մահացու մեղք քանի՞ք են ։

Պատ ։ Եօթն են · ա՟, Հպարտու_
թի · Նախանձ · Բարկու_
թի Ծուլութի Ագահու_
թիւն · Որկրամոլութիւն ·
Բղջախոհութի ։

Հարց ։ Արժանինդիր մեղք յա՟յ
՞յք են ։

Պատ ։ Են այսոքիկ ։ Անմեղ սպա_
նումն · Արուագիտութի ·
Զրկանք աղքատաց · Հա_
տանել զվարձս մշակաց ։
Զորքս այսոքիկ՝ են սարսա
փելիք · զոր տ՟ր ա՟ծ փրկես

 ցէ

ԺԵ. Մասն։

Հարց։ Որո՞նք են առաքինութիւնք ընդդէմ սոցա։

Պատ։ Եօթն են. այս, Խոնարհութիւն ընդդէմ Հպարտութեան. Բարեհաճութիւն ընդդէմ Նախանձու. Հեզութիւն ընդդէմ Բարկութեան. Առատասրտութիւն ընդդէմ Ագահութեան. Արիութիւն ընդդէմ Ծուլութեան. Պահեցողութիւն ընդդէմ Որկրամոլութեան. Ողջախոհութիւն ընդդէմ Բղջախոհութեան։

Հարց։ Մեղքն քանի՞ բանիւ կու գործուի։

Պատ։ Երեք. այս, Խորհրդով. Բանիւ. և Գործով։

Հարց։ Պատմեա՛ մի ըստ միոջէ որ իմանամ։

Պատ։ Խորհրդոփ մեղանչել կոչի, յորժամ ՚ի սրտի մերում

 չար

չար խորհիմք։

Բանիւն այն է, երբ որ քիւ ֆր հանեմք՝ի բերանոյ։ Գործովն որ ձեռօք, կամ ոտիւք կատարեմք, և՝ի գէշ լուխ ածեմք։

Հարց։ Քանի՞ բանք են որ զմրդն վախեցնեն՝ի մեղս գործելոյ

Պատ։ Չորս. այսինքն, Մահն։ Ահեղ դատաստանն։ Ահագին դժոխքն։ եւ անճառելի Արքայութիւն։

Հարց։ Մի միայն զքրիստոնէական հաւատոյ զորպիսութիւն ճանաչելով փրկութեան հասանի՞մք թէ ոչ։

Պատ։ Մի միայն ճանաչողութեամբ ոչ հասանիմք։

Հարց։ Ինչո՞ւ համար։

Պատ։ Այն, զի հաւատք առանց գործոց մեռեալ մարդոյ պէս է. որ առաքեալն վկայէ,

 Թէ

Թէ հաւատք առանց գոր-
ծոյ մեռեալ է։

Ժուրդ։ Զի՞նչ են բարի գործքն։

Պտփ։ Աղօթք. Պահք. և Ողոր-
մութիւնք։

Ժուրդ։ Գիտե՞ս զտէրունական ա-
ղօթքն։

Պտփ։ Այո՛ գիտեմ։

Ժուրդ։ Ասա՛ զոր ուսանեմ։

Պտփ։ Հայր մեր որ յերկինս ես
սուրբ եղիցի անուն քո. եկես-
ցէ արքայութիւն քո. եղիցին
կամք քո՝ որպէս յերկինս և
յերկրի. զհաց մեր հանա-
պազորդ տո՛ւր մեզ այսօր.
և թո՛ղ մեզ զպարտիս մեր՝
որպէս և մեք թողումք մերոց
պարտապանաց. և մի՛ տանիր
զմեզ ՚ի փորձութիւն. այլ՝
փրկեա՛ ՚ի չարէ։ Զի քո է
արքայութիւն և զօրութիւն և
փառք յաւիտեանս ամէն։

 Ժուրդ։

Հարց. Գիտե՞ս ընդդէմ սրբուհւոյ Աստուածածնի սահմանադրեալ զաղօթքն։

Պատ. Այո՛ գիտեմ։

Հարց. Ասա՛ զոր լուայց։

Պատ. Անկանիմք առաջի քո տի-րամայր մեր Աստուածածին և ա-ղաչեմք զանարատ զկոյսդ․ բարեխօսեա վասն անձանց մերոց․ և աղաչեա զՄիածին որդիդ․ փրկել զմեզ ՚ի փոր-ձութենէ և յամ[ե]նայն վտանգից մե-րոց։ Ով արձակիչդ ես կա-պելոց պարգեւատու ամէն․ այսօր հայցմամբ ծերու-նւոյն՝ արձակեա՛ եզիս ընդ բազմամեղս՝ ՚ի կապանաց մա-հու ՚ի կեանսդ յաւիտենից ամէն։

Հարց. Յորժամ քահանայն առէք կերէք ասէ՝ դու զի՞նչ ա-սել պարտիս։



Պատ.

Պ․ դ․ Ողորմս զայս հարկաւոր։
Ա̃ծ մարդասէր, որ առա-
քեցեր զորդիդ քո միածին,
և նորին Ա̃ծային կարողու-
թե̃ն զհայրական գթութի̃ն
քո ծանեաք․ վս̃ զի Ա̃ծա-
պէս էր Խաչին կամօք վս̃
մեր․ սոյնպէս ժուժկալութի̃
երեքօրեայ թաղմանն․ և
երանաւէտ Յարութի̃ն․ և
Ա̃ծային համբարձումն
փառօք հօրդ․ և ընդաջմէ
քումմէ նըստելն՝ զորս հա-
ւատամ և երկրպագանեմ։

Թարգմանութի̃ Հայր Մերին
Տաճկերէն։

Եա կէօյտէքի փէտէրի-
միզ, սէնին իսմին միւշէռ-
ռէֆ օլսուն, սէնին փատի-
շահլըղըն վասըլ օլա, սէ-
նին էմրին նիճէ քի կէօյ-
տէ,

տէ, եօյլէ պու եէր իւզէ_
րինտէ տախի էտա օլուն_
սուն. սէն պիզիմ կիւնտէ_
լիք էթմէղիմիզի պու կիւն
տախի՝ պիզէ էհսան էտէ_
սին, վէ պիզիմ պօրճու_
մուզու՝ պիզէ աֆֆ էտէ_
սին. Նիճէ քի պիզ տախի՝
պիզիմ պօրճլուլարըմըզա
աֆֆ էտէրիզ. վէ պիզի
պիր թէճրիպէյէ սօքմայ
ըպ, գաթաթան պէլատէն
հըֆզ էտէսին ամին.

[illegible]

ԱՄԻՆ.